

Յիսուս

ՕՐԱԿԱՆ ԱՂՈԹԱԿԱՐԳ



Use Daily from first Sunday of Easter until 50th Day

ՕՐԱԿԱՆ ԱՂՕԹԱԿԱՐԳ

ՅԻՆԱՆՑ

Մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի Յարութիւնը մեզի ուրախութիւն եւ յոյս կը պարգեւէ, այս պատճառաւ մենք Չատիկը յիսուն օր կը տօնախմբենք. այս շրջանը Յինունք կը կոչուի եւ վերջին օրը կը նշենք Հոգեգալուստի Տօնը: Քրիստոսի Յարութիւնը մեր հաւատքի կորիզն է որպէս յաղթանակի հռչակում մահուան դէմ: Այս յաղթանակն է որ կը դիմադրէ Սատանային եւ չար ուժերուն դէմ՝ որոնք կը սպառնան մեզ խաբել եւ գերի դարձնել, մեզ վար քաշել եւ հեռացնել Աստուծոյ սէրէն, եւ այս յաղթանակն է որ այդ ուժերը անգօր կը դարձնէ: Իր Յարութեամբ՝ Յիսուս կը բանայ նոր աշխարհ մը, նոր Արքայութիւն մը, որուն մէջ ինքն է ամեն բանի Վերջը եւ ոչ թէ մահը: Ուրեմն, մենք կ'աղօթենք եւ շնորհակալութիւն կը յայտնենք այդ լեցուն կեանքին որ Յիսուս կը բաժնէ իր հետեւորդներուն հետ. այդ յաւիտենական կեանքը որ մենք հոս եւ հիմա կը ճաշակենք:

Հետեւեալը գաղութային առիթ մըն է Արեւելեան Թեմի հաւատացեալներուն, որ միասին աղօթեն, միաւորելով մեր մտահոգութիւնները, կառուցանելու համար մեր Տիրոջ մարմինը: Այս աղօթքները քաղուած են Հայաստանեայց Եկեղեցւոյ սուրբ աւանդութիւններէն, եւ աղօթքներուն մեծամասնութիւնը առնուած են Ժամագիրքէն: Յինանց շրջանը, կը քաջալերենք մեր բոլոր հաւատացեալներուն որ օրը առնուազն տասը վայրկեան բարձրաձայն կարդան այս աղօթքները սկիզբէն մինչեւ վերջ. նախընտրելի է որ ընդերցողները տրամադրեն յատուկ Ժամանակ եւ վայր աղօթելու, ըլլայ առանձին, ընտանեկան եւ կամ նոյնիսկ բարեկամներով: Կարելի է նաեւ ստեղծել հոգեւոր մթնոլորտ մը ունենալով աղօթասեղան մը զետեղելով վրան խաչ, խաչքար, սրբապատկեր, մոմ, խունկ եւ այլն:

Այս աղօթելու գաղափարը սկզբնակէտն է ամենօրեայ աղօթքի որ պէտք է դառնայ սովորութիւն, ուր մեր փառաբանութիւնը, սպաշխարութիւնը, եւ վերակոդմնորոշումը առ Աստուած կը դառնայ բնական եւ սովորական մեր կեանքէն ներս:

Թող Տէրը լսէ մեր աղօթքները եւ ողորմէ մեզ:

† Խաչակնքէ

Աղօթքները եւ սաղմոսները քաղուած են Հայաստանեայց Եկեղեցւոյ Ժամագիրքէն, բացի հանգանակէն, որ առնուած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Մկրտութեան արարողութենէն: Նարեկացւոյ աղօթքի արդի հայերէն թարգմանութիւնը՝ Թորգոմ Արք. Գուշակեան (Երուսաղէմ, 1931) Ընթերցում. Երուսաղէմ Տպարան Սրբոց Յակոբեանց, 1981, եւ այլ թարգմանութիւն աշխարհաբառի Արփի Նագգաշեան եւ Կիլոս Գ. Քիւփէլեան: Այս աղօթակարգը հաւաքուած են Սարկաւազ Էրիք Վոզիի կողմէ: Առաջնորդութիւն Հայոց Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան Թեմի, 2021.

† Օրինեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս.

Ձեռքերը բարձրացուցած եւ բազկատարած

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեացէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: † Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն.

Ձեռքերն ու մատները միացուցած

Հաւատամք † յԱմենասուրբ Երրորդութիւնն, ի Հայր, եւ յՈրդի, եւ ի Սուրբ Հոգի: Չաւետումն Գաբրիէլի, զԾնունդն Քրիստոսի • զՄկրտութիւնն, զԶարչարանս, զԽաչելութիւնն, զԹաղումն երեքօրեայ, զՅարութիւնն, զաստուածապէս Համբարձումն, զՆստիլին ընդ աջմէ Հօր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ Գալուստն՝ խոստովանիմք եւ հաւատամք:

† Սուրբ Աստուած, Սուրբ եւ հօգօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛մեզ: (Կրկնել երեք անգամ)

Փառաւորեալ եւ օրինեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ՝ մայր քրիստոսի, մատո՛ գաղաչանս մեր որդւոյ քոյ եւ աստուծոյ մերոյ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (Երկրպագել մէկ անգամ)

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (Երկրպագել մէկ անգամ)

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (Երկրպագել մէկ անգամ)

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (Երկրպագել մէկ անգամ)

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր, որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղին եւ երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակա՛լ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Աղօթել սուրբերուն օրը

Պսակիչ սրբոց Քրիստոս, որ պսակես զսուրբս քո եւ առնես զկամս երկիւղածաց քոց եւ նայիս սիրով եւ քաղցրութեամբ յարարածս քո, լո՛ւր մեզ յերկնից ի սրբութենէ քումմէ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց եւ Ս. (անուն-ի) որոց այսօր է յիշատակ: Լո՛ւր մեզ, Տէր, եւ ողորմեա՛.

Օգնեա՛ մեզ, Տէ՛ր, օգնեա՛ մեզ, Աստուած Փրկի՛չ մեր, վասն մեծի փառաց անուանդ քո: Տէ՛ր, փրկեա՛ զմեզ եւ քաւեա՛ զմեղս մեր վասն անուան քոյ սրբոյ: Պարսպեալ պահեա՛ զ՛առ ի քեզ զապաւինեալ եւ գյուսացեալ ժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական † խաչիւղ քով ի խաղաղութեան: Փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ † Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալիլուիա, ալիլուիա, ալիլուիա.

Ողորմութեամբ Տեառն լի եղել երկիր, եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան, եւ
Հոգւով բերանոյ նորա՝ ամենայն զօրութիւնք նոցա:

Ալիլուիա, ալիլուիա, ալիլուիա.

Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա
յերեսաց նորա:

† Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալիլուիա, ալիլուիա, ալիլուիա:

Սաղմոս ԺԵ

Պահեա՛ զիս, Աստուա՛ծ, զի ես ի քեզ յուսացայ. ասացի Տեառն՝ • Տէր իմ ես դու, եւ
բարիք իմ ինձ ի քէն են:

Սրբոց քոց, որ են յերկրի քում, • սքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա:

Յաճախեսցին հիւանդութիւնք նոցա, • յետ այսորիկ ապա վաղվադեսցին:

Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա յարեանց • եւ ոչ յիշեցից զանուանս նոցա ի շրթունս իմ:

Տէ՛ր, բաժին ժառանգութեան իմոյ եւ բաժակի իմոյ դու ես, • որ այսրէն դարձուցանես
զժառանգութիւն իմ յիս:

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, • եւ ժառանգութիւն իմ հաճոյ եղել ինձ:

Օրհնեցից զՏէր, որ իմաստուն արար զիս, • մինչ ի գիշերի եւս խրատեցին զիս
երիկամունք իմ:

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, • զի է ընդ աջմէ իմմէ, զի մի՛
սասանեցայց:

Վասն այսորիկ ուրախ եղել սիրտ իմ, եւ ցնծացաւ լեզու իմ, • եւս եւ մարմին իմ
բնակեցի յուսով:

Չի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս, • ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն:

Յուցեր ինձ զճանապարհս քո կենաց, • լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց՝ ի
քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ իսպառ:

† Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ • այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երգ Սուրբ Ներսէս Շնորհալիի

առաջնոյ աւուր միաշարքին եւ ի խորհուրդ արարչութեան եւ յարութեանն Քրիստոսի

Սէրդ սիրով խոնարհեցար,
ի փրկութիւն մեր մարմնացար,
նովին մարմնովն խաչեցար,
ի գերեզման մահու եդար,
այսօր յարեար աստուածաբար,
ի հրեշտակաց քարոզեցար,
եկա՛յք, փրկեա՛յք, ընդ գուարթնոյն,
տուք օրհնութիւն Յարուցելոյն:

Երեւեցար խնկաբերիցն
յողջոյն կենացն ուրախալից
եւ ի լերինն Գալիլիա
առաքելոց մետասանից,
արժանացո՛ղմեզ ընդ նոսին
գրեզ տեսանել յօրն վերջին,
եկա՛յք, փրկեա՛յք, ընդ գուարթնոյն,
տուք օրհնութիւն Յարուցելոյն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

Ուստի, խորհուրդ մը կը յայտնեմ ձեզի. ամենքս ալ պիտի ննջենք. բայց ոչ թէ ամենքս:
Պիտի նորոգուինք յանկարծակի, ակնթարթի մը մէջ, վերջին փողի ատեն, քանի որ
փողը պիտի հնչէ, եւ մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապականութեան,
մենք ալ պիտի նորոգուինք. քանզի պէտք է որ այս ապականութիւնը
անապականութիւն առնէ, եւ այս մահկանացու գոյութիւնը՝ անմահութիւն: Եւ
երբ այս մահկանացու գոյութիւնը կրէ անմահութիւն, եւ այս ապականութիւնը՝
անապականութիւն, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ. «Մահը կուլ
գնաց յաղթութեան: Ո՛ւր է, մա՛հ, քու յաղթութիւնդ. ո՛ւր է, դժո՛խք, քու խայթոցդ»:
Մահուան խայթոցը մեղքն է: Եւ մեղքին գորութիւնը՝ օրէնքը: Բայց գոհութիւն
Աստուծոյ՝ որ տուաւ մեզի յաղթութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով:

Աղօթք ննջեցեալներուն համար

Քրիստոս՝ Աստուծոյ Որդի, դուն անոխակալ ես եւ բարեգութ, քու արարչական սիրովդ գրա քու հանգուցեալ ծառաներուդ հոգեներուն. մանաւանդ քու ծարայիդ ----ին: Յիշէ զանոնք քու արքայութեանդ գալուստին մեծ օրը: Արժանի ըրէ ողորմութեան, մեղքերու քաւութեան եւ թողութեան: Լուսաւորէ զանոնք եւ քու սուրբերուդ հետ դասէ քու աջակողմդ: Որովհետեւ դուն ես Տէրն ու արարիչը բոլորին, դատաւորը ողջերուն եւ մեռելներուն: † եւ քեզի կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, հիմա եւ միշտ եւ յաւիտենապէս. ամէն:

Կը պաղատինք, Տէր բարեգութ. հետ հաւատքով ննջողներուն՝ մեզ ալ յուսով ընդունէ դուն. երուսաղէմ քաղաքդ վերին՝ ուր արդարներն կը ժողովին. անոնց հետ փառքն երգենք † անանց՝ Երրորդութեան երեք անձանց:

Աղօթք Յիսնանց

Փառք յարութեան քոյ, Տէ՛ր. Ոչ դադարեցայց, Քրիստո՛ս, օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ: Փառք յարութեան քոյ, Տէ՛ր. ոչ դադարեցայց, Յիսո՛ւս, զովլէ զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ: Ես ոչ դադարեցայց, Փրկի՛չ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Չուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ աւետեօք յարութեան տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղեւ պտուղ եւ անդրանիկ ամենայն ննջեցելոց, խորտակեաց զդրունս դժոխոց եւ ելոյծ զբռնութիւն մահու եւ ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան, խնդրեսցուք հաւատով ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, զի զմեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ, կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց: Վասն զի զայս խոստացաւ՝ զմեծ եւ զանճառելի շնորհս պարգեւել սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Ամենակեցոյց, ճշմարիտ, սուրբ, մեծի յարութեանն † Քրիստոսի Աստուծոյ մերոյ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:


Սուրբ Ներսէս Շնորհալիի 24 Աղօթքներէն

† Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, յիշեա՛ զիս որպէս զաւագակն, յորժամ գաս արքայութեամբ քով, † եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Քում ամենագոր եւ հրաշալի յարութեանդ, Քրիստո՛ս Աստուած մեր, երկիր պագանեն
գօրք հրեշտակաց, զի դու միայն ունիս զանմահութիւն, բնակեալդ ի լոյս անմատոյց:
Եւ մեր՝ հողելէն արարածքս, խոնարհեալք երկիւղիւ երկիր պագանենք, զսուրբ եւ
զհրաշալի եւ գյաղթող գյարութիւնդ քո օրհնենք եւ փառաւորենք: Եւ ընդ երկնային
գօրսն մատուցանենք զօրհնութիւն եւ **†** զփառս ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց

Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի





WWW.VEMKAR.US

EASTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA